ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՈՒՍԱԲՈՒՆՈՒԹԻՒՆ

Հալուէ։

ՀԱԼՈՒԷՆ տեսակ մը բոյս է որ աւելի Հնդկաստան ու Աֆրիկէի խիստ տաք կողմերը կը բուսնի, և մանաւանդ գլուխ Արեյուսոյ ըսուած երկիրը ու Աղբոթորա կղզւոյն մէջ։ Աղբոթորայի հալուէին պատկերն է ահա հոս դրբուածը։

Այս բոյսէն տեսակ մը հիւթ կամ խէժ կ'ելլէ անուշահոտ, որ ան ալ հալուէ կ'ըսուի, և տաձկերէն սապոտ կամ սարը սապոտ [1], որ դեղի տեղ ալ գործածուի։

Աղբոթարայի հալուէն փայլուն ու թափանցիկ է, ու փոշի դարձընես նէ՝ քրքմագոյն դեղին տեսք մը կ'առնէ. համը դառն է, հոտը սուր ու սաստիկ։

1 Գղ. Aloès.

Այս տեսակը կը հանեն Աղբոթորայի հալուէ բոյսին տերևները գծելով կամ ճղքելով. և ասիկայ է տաձկերէն սա՛պրէ սապոտ՝ [2] ըսուածը։ Կ'ըսեն թէ ուրիշ երկու տեսակ հալուէներն ալ որ առջինին մաքրութիւնն ու յարգը չունին՝ նոյն բոյսէն կը հանուին. միայն թէ տերևները գծելով հանածը առաջին տեսակն է, իսկ տերևները ծեծելով ու եփելով հանուածները երկրորդ ու երրորդ տեսակները կը սեպուին։

Իսկ հալուէի ծառը, որ տաձկերէն էօպ աղաձը կամ օպ աղաձը [2] կ'ըսուի, բոլորովին տարբեր բոյս մըն է՝ որ Հնդկաստան կը բուսնի, ու կրակի մէջ ձըգես նէ անուշ հոտ կը հանէ։

1 Aloès soccotrin. 2 Bois d'aloès.